

ԱՇՈՏ ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ԿՐԱԿՆԵՐ

*Նվիրում եմ քրոջս՝ Շուշիկ Վարդանյանի
և եղբորս՝ Արմենակ Մելիքյանի հիշատակին*

*Ինձ եք նայում նկարներից՝
Հուշաքար ու հուշեր դարձած,
Խոնարհվում եմ շիրիմներիդ՝
Խնկարկելով նրանց առաջ:*

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 821.19-8 Մեխիքյան
ԳՄԴ 84 (5Հ)
Մ 490

Աշոտ Մեխիքյան

Մ 490 Մայրամուտի կրակներ: Բանաստեղծություններ, պատմված-
քներ / Մեխիքյան Աշոտ. - Եր.: Արմավ հրատ., 2016.- 48 էջ:

ՀՏԴ 821.19-8 Մեխիքյան
ԳՄԴ 84 (5Հ)

ISBN 978-9939-863-40-5

© Մեխիքյան Աշոտ, 2016
© «Արմավ», 2016

ԲԱՆՈՒՄԵՆԻ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առավոտվա շաղերից,
Մայրամուտի շողերից
Ծիածաններ հյուսեցի,
Աղբյուրի պես մշտաճու,
Սոխակի պես քաղցրախոս
Այս երգերս գրեցի:

Մայրամուտի կրակներ՝
Հեքիաթային հրացուլք,
Թողած անմոռաց պահեր՝
Խամրեք պիտի քիչ հետո:

Խամրեն պիտի, ափսո՛ս, և
Կախարդող ողջ գույներն այդ,
Դառնան գեղեցիկ հուշեր-
Հուշերի մեջ անավարտ:

Կակաչներին սևասիրտ
Արտույտը սեր է երգում,
Ասես անուշ ձայնով իր
Սևը կարմիր է ներկում:

Աշնան քամին մերկացնում է ծառերը,
Պոկում վերջին տերևները գունազարդ,
Աշնան քամին սերն է պոկում իմ սրտից,
Առնում-տանում հեռուները ինձ անհայտ...

Ավազների վրա գույն-գույն,
Ավազների վրա թաց
Պատկերված են մի վառ գարուն
Ու մի շաղոտ լուսաբաց...

Դուրսը՝ քամի-փոթորիկ,
Սրտումս՝ անձրև ու ամպրոպ,
Աչքերում քո գեղեցիկ՝
Գարուն՝ պայծառ-արևոտ:

Պուձուր-մուձուրիկ յարս
Վառեց ջանս, ջիգյարս,
Վերքիս չարեց դեղ ու ձար,
Կոտրեց սիրտս, քնարս:

Գարնան անձրևը թափվում էր վարար
Ամպրոպառատ ու թխպոտ երկնքից,
Սերս սրտիցս պոկեցիր տարար,
Անձրևի երգն ինձ միայն թողեցիր:

Արի գնանք հանդերը,
Մեզ օրորեն վարդերը,
Քեզ՝ վրանի մեջ հոգուս
Գրկեմ, սիրեմ մինչև լույս:

Թող լինի՝ թող ուշ լինի,
Համով շաքար, նուշ լինի,
Յարի դրկածն ուրիշ է,
Թեկուզ վարդի փուշ լինի:

Ախչի՛, մինի շորիկդ
Բաց է արել փորիկդ,
Ծոցդ մտնեմ գիշերով,
Գրկեմ երկու լորիկդ:

Կարմիր հագան ամպերը,
Իրիկունն է մոտենում,
Յարս կերթա հանդերը,
Ես կտանջվեմ առանց քուն:

Ակամայից աչքս ընկավ
Կրծքիդ՝ ձերմակ-կիսաբաց,
Բայց մի կարգին չնայեցի,
Ախր շատ եմ անոթխած:

Գիշերն ամբողջ ձնել է,
Յարս խմել՝ քնել է,
Ձեն տալ-հանել չեմ ուզում,
Էնքան անուշ քնել է:

Ծարավ ու ծոմ եմ. պաս է,
Յարիս հագածը խաս է,
Ջուր է լցնում աղբյուրից,
Ձեռինը ոսկե թաս է,
Խոռովել է, չի խոսում,
Կարծում է՝ թագա հարս է:

Պաշիկ տալով-առնելով՝
Սերս սիրուդ խառնել ու
Միրո գինուց արբել եմ,
Միրուններին էլ հաձախ
Սեր խոստացել-խաբել եմ:

Օտար ասիերի ծաղիկն անհոտ է,
Ջրերը՝ անհամ, երկինքն ամպոտ է,
Օտարը երբեք հոգիս չի գերի,
Հայաշունչն է, որ ինձ սրտամոտ է...

Քանի սիրուն-շարմաղ աղջիկ՝
Հոգի հանող հուր ու կրակ,
Կուզեմ սիրել ես ամենքին,
Բայց մի սիրտ է իմ կրծքի տակ:

Միշտ իմ սրտում են եղել
Ինձ հուզող ու հարազատ,
Այնքան զուլալ ու մաքուր
Կոմիտասյան երգերը
Ու այդ երգերի ներքո
Երազներս օրորող,
Քուն ու հանգիստս հսկող
Մորս քնքուշ ձեռքերը...

Գիշերների
զով երկնքին
լուսնալույսի
կանթեղ եմ ես,
որքան էլ որ
սիրտս ելած,
ու դառնացած
լինի հոգիս,
կրակներս
չեն մարելու.
կբորբոքեմ.
անթեղ եմ ես:
Ով իր ցավին
մի ձար հայցի,
միշտ նրա հետ
այնտեղ եմ ես...

Երազներիս երկնքում
Հավքերն ուրախ համերգում,
Խինդով լցնում են հոգիս,
Երբ բացում եմ աչքերս,
Երազները՝ շուտ անցնում,
Մոռացվում է ամեն ինչ,
Միայն մայրս է ինձ ժպտում,
Մայրս՝ կանգնած սնարիս...

Պատուհանս բաց, նկարիդ առաջ
Միայնակ նստել, սիրերգ եմ գրում,
Ու պատուհանես ուշացածի պես
Հովն ինձ անապակ համբույր է բերում:

Ույեմբեր, 1947թ.

Բարձրակրունկ նա հագած
Հազիվ քայլում է վախով,
Տեսնողներն էլ կարծում են՝
Կարավում է նազանքով:

Երբ անցնենք նորից ոսկի արտերով,
Կրծքիդ կփարվեմ անսանձ կարոտով,
Քեզ գրկած՝ կրակ քո սերը կերգեմ,
Երբ անցնենք նորից ծաղկուն հանդերով:

Լույս դեմքիդ շողը
Երեսիս ընկավ,
Սիրուդ կրակով
Իմ սիրտը այրեց,
Աչքերիդ հրով՝
Արևից պայծառ,
Կենսախիհնդ ու խենթ
Մեր սերը ծնվեց:

Հանդիպելիս անում եմ
Միրտս սիրով երկու կես,
Մեկը պահում կրծքիս տակ,
Մեկն էլ՝ որ նվիրեմ քեզ:

Աստված տալիս է, սատանան՝ տանում,
Աստված շնորհում՝ խելք, իմաստություն,
Իսկ քեզ մնում է, որ չմոլորվես,
Զթողնես քո կյանք մտնի բանասարկուն:

Երբ էլ որ քնեմ,
Արթուն եմ պահում
Աչքիս մեկը ես,
Ականջս՝ նույնպես,
Երազիս թե գաս,
Կլսեմ ձայնդ,
Քնած աչքով էլ,
Սեր, կտեսնեմ քեզ...

Նստել եմ բակում՝ ծառերիս զովին,
Փոքրիկ մի ձնձղուկ (ինչպիսի՞ հրաշք)
Գալիս-կանգնում է կոթնած իմ թևին:

Փոքրիկ ես դու դեռ, փոքրիկ, բայց հպարտ,
Նոր սկսել ես քայլել... չորեքթաթ,
Մորդ չես վազում. ինքնուրույն ես շատ:

Թող երկինքը կապույտով,
Արևներով ժպտա միշտ,
Չտեսնի թող ոչ մի մայր
Բաժանության դառը վիշտ...

Առավոտվա շաղերից,
Մայրամուտի շողերից
Ծիածաններ հյուսեցի-
Աղբյուրի պես մշտահոս,
Սոխակի պես քաղցրախոս
Այս երգերս գրեցի:

Պատուհանես ինձ եմ նայում
Ջորս բարդիներ երկնասլաց,
Ջով զեփյուռից մեղմ օրորվում,
Օրորում եմ անձս հոգնած:

Նայում եմ ու չեմ կշտանում,
Կտրվում եմ պատուհանից,
Դուրս եմ ելնում-գնում նրանց.
Թող օրորեն ինձ մոտիկից:

Սավառնել կուզեմ արծիվը ինչպես
Հայոց լեռների կատարներին վես,
Մոռանալով բայց, որ թևեր չունեն,
Արծվի հետ չափվել անկարող եմ ես:

Մի այր հաստատ մեր տուն կգա.
Աչքս պաղավ,
Ու
Բեղերս քորվեցին,
Հյուրն Աստծունն է,
Բարով թող գա,

Ինչ սեռի էլ պատկանի...

Սևս ներս կանեն,
Սպիտակը՝ դուրս,
Թող որ չհմանան
Տվայտանքն հոգուս...

Թեկուզ հիմա էլ գնաս՝
Չեմ մտածի, չեմ տխրի,
Միրտս՝ անդեղ-անդարման,
Քեզ համար չեմ պղտորի:

Ես քնած եմ, դու՝ արթուն,
Ես արթուն եմ, դու՝ քնած,
Սիրեմ-սիրեմ ենք խաղում.
Հովն է մեր քունն օրորում,
Գրկում ու համբուրում մեզ
Պատուհանից կիսաբաց:

ԵՂԵՌՆ-101

Մեր սուրբ հավատի զորավոր խաչով,
Հայացքս հույսով երկնքին հառած՝
Լալիս եմ ցավը նահատակ հայի,
Մեր հայոց ազգի ու մեր ծնողաց,
Մաղթում, որ խաղաղ օրերը բացվեն,
Բարությանը լցվեն սրտերը մարդկանց:

Աստծո ամեն առավոտ
Մշտաժպիտ, մանրաքայլ,
Մարդը շուկա էր գնում՝
Թեթև մի պարկ շալակած:

Հաճելի մի պապիկ էր,
Համակրելի այնքան,
Առնում կամ վաճառում էր
Միշտ անտրտունջ, միշտ խաղաղ:

Մարդ է կոչումդ
Իրականում, բայց
Կտրող հայելի.
Քեզանից ես միշտ
Հեռու կփախչեմ,
Քանի դեռ սիրտդ
Չարությանք է լի...

ԽՆՁՈՐԵՆԻՍ

Երբ բացվում է գարունը,
Ծառս ծաղկում-կանաչում,
Ինձ չի թողնում անտարբեր,
Աշնանն ուռենու փոխվում,
Թեքվում՝ հողն է համբուրում
Պտուղներով ծանրաբեռ,
Ափսո՛ս, նա էլ ինձ նման
Ծերացել է, ծերացել:

Խնձորենիս ծերացավ,
Խնձորենուս հետ էլ՝ ես,
Խոնարհվեցինք-կոռացանք
Մենք էլ ուռիների պես,
Բայց դեռ ապրում ենք, քանզի
Կյանքն է ձյուղին քաղցրացել:

Ամեն մի նորը պետք չէ ընդունել
Հալած յուղի տեղ հենց միանգամից,
Ամեն նորը դեռ առաջավոր չէ -
Չհրաժարվենք լավագույն հնից:

Մարդիկ քո գրկում գույներ են, աշխարհ,
Հոտավետ ծաղիկ, բույրեր են, աշխարհ,
Դու՝ այգի, պարտեզ, ես՝ թուփ աննշան,
Գույն ու բույրերը, դրախտո՞ղ թողել՝
Կյանքից անհագուրդ գնում եմ, աշխարհ:

Միմյանց խաբել ու սեր ենք խաղացել,
Ինչը երկուսս էլ հասկացել ենք լավ,
Իմ սրտում երբեք սեր չես ունեցել-
Ես միշտ օտար եմ եղել քեզ համար:

«Կարկուտը խփած տեղն է խփում»,
Շատ չանցած՝ գղջում, լալիս է ցավից
Եվ միտումնավոր ոչինչ չի անում.
Գործի բնույթն է նրա այդպիսին:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայրամուտի կրակներ	4
Կակաչներին սևասիրտ	4
Աշնան քամին մերկացնում է ծառերը	4
Ավազների վրա գույն-գույն	5
Դուրսը՝ քամի-փոթորիկ	5
Պուձուր-մուձուրիկ յարս	5
Գարնան անձրևը թափվում էր վարար	5
Արի գնանք հանդերը	6
Թող լինի՝ թող ուշ լինի	6
Ախչի՛, մինի շորիկդ	6
Կարմիր հագան ամպերը	6
Ակամայից աչքս ընկավ	7
Գիշերն ամբողջ ձնել է	7
Ծարավ ու ծոմ եմ. պաս է	7
Պաչիկ տալով-առնելով	7
Օտար ափերի ծաղիկն անհոտ է	8
Քանի՛ սիրուն-շարմաղ աղջիկ	8
Միշտ իմ սրտում եմ եղել	8
Գիշերների	9

Երազներին երկնքում	9
Պատուհանս բաց, նկարիդ առաջ	10
Բարձրակրունկ նա հագած	10
Երբ անցնենք նորից ոսկի արտերով	10
Լույս դեմքիդ շողը	10
Հանդիպելիս անում եմ	11
Աստված տալիս է, սատանան՝ տանում	11
Երբ էլ որ քնեմ	11
Նստել եմ բակում՝ ծառերիս զովին	11
Փոքրիկ ես դու դեռ, փոքրիկ, բայց հպարտ	12
Թող երկինքը կապույտով	12
Առավոտվա շաղերից	12
Պատուհանես ինձ եմ նայում	12
Սավառնել կուզեմ արծիվը ինչպես	13
Մի այր հաստատ մեր տուն կգա	13
Սևս ներս կանեմ	13
Թեկուզ հիմա էլ գնաս	13
Ես քնած եմ, դու՝ արթուն	14
Եղեռն-101	14
Աստծո ամեն առավոտ	14
Մարդ է կոչումդ	15
Խնձորենիս	15
Խնձորենիս ծերացավ	15
Ամեն մի նորը պետք չէ ընդունել	16
Մարդիկ քո գրկում գույներ են, աշխարհ	16
Միմյանց խաբել ու սեր ենք խաղացել	16
«Կարկուտը խփած տեղն է խփում»	16
Կյանքս երազ էր, հոսեց ու գնաց	17
Փոքրիկ մի առու սարերից իջնում	17

Հեռու, քարքարոտ ձամփերը բռնած	17
Գնալ-գալը քո էլ չեմ նկատում	17
Թեթև մի քամի՝ մազերս խառնում	17
Սրանից տհաձ չկա ուրիշ բան	18
Դու հպարտ ես, դու միշտ վեհ	18
Ընթերցողներս (քիչ չեն այդպիսիք)	18
Իմ մտքերը մշտապես	18
Շուրթերիցդ սեր էր կաթում	19
Մոտենում եմ եզրագծին	19
Հողին տեր դառնանք	19
Աչք չեմ կտրում	20
Հայն արարատ է	20
Լինենք միաբան	21
Սիրում եմ, սիրում	21
Անուն եմ ես, անհուն եմ ես	22
Արարատ մեր սուրբ, մեր կարոտ անմար	22
Աղբյուր ես ջինջ ու քո ջրից	23
Էքսպրոմտ	23
Մի տեղ՝ հորդ անձրև	24
Արմենուհի՛, լուսե՛ աղջիկ	24
Միշտ քեզ հետ եմ	25
Կողքիս ես՝ կրծքիդ	25
Մինչև աշուն	25
Ո՞ւմ տարար	26
Իմ խոհերում մարդն է	27
Թող մեզ ուղեկցի	27
Սերը հուր է, խանդը՝ ջուր	27
Մշտաթռիչք իմ հոգու	28
Ո՞ւր գնալ	28

Ես հասկ կդառնամ	29
Ինչ էլ որ անես	29
Չհասկացա	30
Երբ բացակայում է սերը	31
Սոխակի պես գեղգեղալով	31
Աչիկները բաց արել	32
Գիրքս վերնագրեցի	32

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ինչո՞ւ	34
Խազալ ամիսը	37
Խոսքի ուժը	40

ԱՇՈՏ ՄԵԼԻԻՔՅԱՆ

ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ԿՐԱԿՆԵՐ
բանաստեղծություններ, պատմվածքներ

АШОТ МЕЛИКЯН

ОГНИ ЗАКАТА

стихи, рассказы

Խմբագիր՝ Անդրանիկ Կարապետյան
Ձևավորումը և էջադրումը՝ Արմինե Քոչարյանի
Սրբագրիչ՝ Ռոզա Հովհաննիսյան
Համակարգչային շարվածքը՝ Նունե Նիկողոսյանի

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 4.0 տ.մ.
Թուղթը՝ օֆսեթ 70 գ. 1.4 ծավալային խշռով
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar, Ghabuzian Tigran
Տպաքանակը՝ 200
Տպագրվել է՝ «Նովել հրատարակչություն» ՍՊԸ տպագրատանը
Հասցե՝ Ք. Երևան, Մայիսի 9 փ., 23:



ИЗДАТЕЛЬСТВО **АРМАВ**

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru